## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«24» մարտի 2025 թվականի N 440**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 120 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Երանուհի Մկրտչյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 06032025-07-0182 վկայական) ***ք. Չարենցավան Հ. Թումանյան փողոց թիվ 120*** հասցեում գտնվող 17.2 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 17.2 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Երանուհի Մկրտչյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 17721 (տասնյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Երանուհի Մկրտչյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 305000 (երեք հարյուր հինգ հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 77000 (յոթանասունյոթ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Երանուհի Մկրտչյանի*** կողմից:

6.Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Երանուհի Մկրտչյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«24» մարտի 2025 թվականի N439**

## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 34 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, քննարկելով Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 5-րդ թաղամաս, 4-րդ շենք, բնակարան 6 հասցեի բնակիչ Էմիլ Խաչատրյանի 2025 թվականի մարտի 24-ի թիվ 1146/16 դիմումը, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնք, ք.Չարենցավան 5-րդ թաղամաս, 4-րդ շենք, բնակարան 6 հասցեի ներքոհիշյալ բնակիչների համար սահմանել աղբահանության վարձավճարի 100 % զեղչ:

***Խաչատրյան Էմիլ***
***Բաղդասարյանց Վիոլետա***
***Խաչատրյան Էլինա***
***Խաչատրյան Էրիկա***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«24» մարտի 2025 թվականի N 438**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ Պ. ՊՌՈՇՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24/4 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Սամվել Սարիբեկյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 11032025-07-0176 վկայական) ***ք. Չարենցավան Պ. Պռոշյան փողոց թիվ 24/4*** հասցեում գտնվող 21.1 քմ արտաքին մակերեսով առևտրի սրահը և 21.1 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Սամվել Սարիբեկյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) առևտրի սրահի 1 քառակուսի մետրի համար՝ 17721 (տասնյոթ հազար յոթ հարյուր քսանմեկ) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Սամվել Սարիբեկյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 374000 (երեք հարյուր յոթանասունչորս հազար) դրամ՝ առևտրի սրահի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 94000 (իննսունչորս հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Սամվել Սարիբեկյանի*** կողմից:

6.Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Սամվել Սարիբեկյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«24» մարտի 2025 թվականի N 437**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 319 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2025 թվականի փետրվարի 19-ի **«Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 32 բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին»** թիվ 319 որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
   «Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2022YCDW9U ծածկագրի»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մարտի 2025 թվականի N 436

## ԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԱԼԱՓԱՐՍ Մ" ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2002 թվականի փետրվարի 02-ի թիվ 88-Ն որոշումների դրույթներով, հաշվի առնելով Ա. Սարիբեկյանի 2025 թվականի մարտի 19-ի թիվ 1104/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Արտակ Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գ. Ալափարս Մ" Կաթողիկոսի փողոց թիվ 32 հասցեում գտնվող 0.13457 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 148.3 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 19"9 քմ մակերեսով ծածկարանը և 0"9 քմ մակերեսով պարիսպը՝ համաձայն հատակագծի և «Գիս-Արտ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023LWVYTN ծածկագրի:
2. Արտակ Սարիբեկյանին սեփականության իրավունքով պատկանող Չարենցավան համայնք գ. Ալափարս Մ. Կաթողիկոսի փողոց թիվ 32 հասցեում գտնվող 0.13457 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասում գտնվող ավտոտնակի /ծածկագիր՝ 07-008-0062-0003-001/ գործառնական նշանակությունը համարել փոխված՝ **որպես բնակելի տուն**:
3. Օրինական ճանաչված շինության համար 30-օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին վճարել 244.000 ՀՀ դրամ:
4. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«21» մարտի 2025 թվականի N 435**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 612-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումների դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող 07-007-0056-0001 ծածկագրով հողատարածքից առանձնացնել 0.0250 հա մակերեսով հողատարածք՝ նկատի ունենալով, որ նպատակային նշանակությունն է ***բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:***

2. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***ք. Չարենցավան 10-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 28/2 հողատարածք:***

3. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն «Գոռ Սահակյան» Ա/Ձ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2025YDMXJM ծածկագրի:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

***ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«21» մարտի 2025 թվականի N 434**

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով Հ. Հովհաննիսյանի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 831/07 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Տալ համաձայնություն ***Հունան Սամվելի Հովհաննիսյանին*** սեփականության իրավունքով պատկանող ***ք. Չարենցավան Գանգրահեր փողոցի փողոց 1-ին փակուղի թիվ 9 հասցեի գույքը*** բաժանել 2 միավորի և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան Գանգրահեր փողոցի փողոց 1-ին փակուղի թիվ 9*** (հողամասի մակերեսը՝ 0"12045 հա) և ***ք. Չարենցավան Գանգրահեր փողոցի փողոց 1-ին փակուղի թիվ 9/1*** /հողամասի մակերեսը՝ 0"00736 հա) միավորներ:
2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները գրանցել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում՝ համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտեսության բաժնի պետ ***Բ. Բալբաբյանի*** վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«20» մարտի 2025 թվականի N 433**

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Համլետ Ղազարյան Վռամի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան 8-րդ թաղամաս 1-ին փողոց 12/2 տարածքում գտնվող 11քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (Մտից N1119/12 առ 2025 թվականի մարտի 20-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N 002870 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Համլետ Ղազարյան Վռամի*** անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ ք. Չարենցավան 8-րդ թաղամաս 1-ին փողոց 12/2 հարակից տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք (Թույլտվություն N173):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«20» մարտի 2025 թվականի N 432**

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄԱԹԵՎՈՍ ԱՊԵՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-008-0220-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10–րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 17-Ա որոշումը և հաշվի առնելով Մ. Ապերյանի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Սեփականության իրավունքով Մաթևոս Ապերյանին պատկանող **07-008-0220-0005** ծածկագրով 0.6025 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
2. Մաթևոս Ապերյանին պատկանող գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունների նախագծման թույլտվության համար տրամադրել 20.03.2025թ. թիվ ՆԹ-0880-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
3. Առաջացած հողատարածքը հասցեավորել ***Չարենցավան համայնք գյուղ Ալափարս Չարենցավանի խճուղի թիվ 1/3:***
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**